05/1961-16
1/17.7/1032-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ № 59-Ն

ք.Երևան «01» 02 2016թ.

## ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1527-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ՏԿԱԻՆ) կանոնադրության 15-րդ կետի 4-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների անվտանգության տեխնիկայի ժամանակավոր կանոնները՝ համաձայն հավելված 1-ի.

2) Հրշեջ ավտոմեքենայի դեղարկղի մեջ գտնվող գույքի և դեղամիջոցների ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:

2. ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ-Երևան քաղաքի փրկարարական վարչության պետին, ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ փրկարարական ուժերի վարչության պետին, ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (վարչության) պետին, ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչությունների պետերին՝ ենթակա անձնակազմի հետ մեկամյա ժամկետում կազմակերպել սույն հրամանի 1-ին կետով հաստատված կանոնների ուսումնասիրման դասընթացներ և ընդունել ստուգարքներ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը դնել ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ տնօրեն, փ/ծ գեներալ-լեյտենանտ Ս.Ազարյանի վրա:

4. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Ա.Երիցյան